1986 թ. հունվարին լրանալու էր Երևանի պետական համալսարանի դոցենտ, փ. գ. թ. Մալֆեդա Սուրենի Դանիելյանի 60 տարին։ Գիտնականի համար դա հասուն, սթափ և կարող մտքի տարիք է։ Տարիք, որ ստիպում է մարդուն հետադարձ մի հայացք նետել անցած ճանապարհին, հանրագումարի բերել արածն ու չարածը՝ գործը նոր եռանդով շարունակելու համար։ Այդպես էլ կլիներ, եթե...

Մ. Ս. Դանիելյանը ծնվել է 1926 թ., Թբիլիսիում։ Ընտանիքով Երևան տեղափոխվելուց հետո, 1943 թ. նա ընդունվում է Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսական բաժինը, որն ավարտում է գերազանցությամբ։ Սերը դեպի փիլիսոփայությունը նրան բերում է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի մասնաճյուղ, որտեղ նա ավարտում է ասպիրանտուրան, պաշտպանում թեկնածուական դիսերտացիա և երկար տարիներ աշխատում որպես ավագ գիտաշխատող։ 1968 թվականից մինչև իր կյանքի վերջը Մ. Ս. Դանիելյանը Երևանի պետական համալսարանի դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնի դոցենտ էր։

Մ. Ս. Դանիելյանի գրչին են պատկանում երեք մենագրություն և մի քանի տասնյակ գիտական հոդվածներ։ Նրա մասնագիտական գործունեության բարձրակետը հանդիսացավ «Ընդհանուր սոցիոլոգիական տեսության իմացաբանական վերլուծությունը» մենագրությունը (1979), որտեղ նորագույն սոցիոլոգիական տեսությունների բանիմաց և մանրակրկիտ վերլուծությունը հետևողականորեն ծառայեցված է հեղինակի հիմնական նպատակին՝ ընդհանուր սոցիոլոգիական տեսության մեթոդի՝ մատերիալիստական դիալեկտիկայի հիմնավորմանն ու մշակմանը։

Իր կյանքի վերջին տարիներին, որոնք անքակտելիորեն կապված էին Երևանի պետական համալսարանի դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնի հետ, Մ. Ս. Դանիելյանն առանձնահատուկ խանդավառությամբ ձեռնամուխ եղավ ամբիոնական ընդհանուր թեմայի՝ փաստարկման փիլիսոփայական պրոբլեմների մշակմանը։ Ընթերցողին ստորև ներկայացվող հոդվածը, որն իր կենդանության օրոք

հեղինակը չհասցրեց հրատարակել, Մ. Ս. Դանիելյանի՝ այդ ուղղությամբ տարվող թեև անավարտ, սակայն ուշագրավ ուսումնասիրության հարաբերականորեն ամբողջական ամփոփումն է ներկայացնում։

Հեղինակը, հակադրվելով փաստարկման արդի արևմտյան տեսություններին (Խ. Պերելման և ուրիշներ), նշում է, որ ձևական և բովանդակային ապացուցումների տարբերակումը սկզբունքորեն հնարավոր չէ իրականացնել տրամաբանության շրջանակներում։ Բովանդակային ապացուցումը (հիմնավորումը) իր անկատարությամբ չէ, որ տարբերվում է ձևայնացված հաշիվներից։ Հիմնավորումը զուտ իմացաբանական ֆենոմեն չէ. այն պայմանավորված է բազմաթիվ սոցիալական, պատմամշակութային և արժեքային գործոններով։ Փաստարկման վերաբերյալ յուրահատուկ հարցադրումը ծնվում է հիմնավորման պրոցեսի ձևայնացման անհնարինության գիտակցումից և նպատակ ունի քննության առնել գիտելիքը սուբյեկտիվ համոզմունքի վերածելու պարագաները։ Սակայն նրա խնդիրը «ոչ այնքան համոզմունքների հիմնավորման և հաղորդման միջոցների և հնարների (կամ առավել վատթար՝ «տեխնիկայի») որոնումն է, որքան համոզմունքների, որպես հասարակական-իմացական երևույթի, համընդհանուր և անհրաժեշտ բնութագրերի ուսումնասիրությունը» (էջ 117)։ Այսպիսով փաստարկման ընդհանուր տեսությունը ձեռք է բերում համափիլիսոփայական հնչեղություն։

Սա է կոնցեպցիայի հիմնական ուղղվածությունը։ Այն անպայման էթիկական է. չէ՞ որ «համոզմունքի պրոբլեմներն ուսումնասիրող փաստարկման տեսությունը լեցուն է խորունկ և վառ արտահայտված սոցիալական իմաստով»։

Հասկանալի է, որ ոչ բոլորը կհամաձայնեն անվերապահորեն հոդվածում զարգացվող դրույթների հետ։ Աշխատանքն ինքն է փաստարկելու իր օգտին։ Մի բան անկասկած է՝ ճշմարտության և համոզմունքի դիալեկտիկան իսկապես կազմում է փաստարկման տեսության կորիզը, և այդ պրոբլեմի՝ ճանաչված մասնագետի կողմից վարպետորեն իրականացված քննարկումը, որը միևնույն ժամանակ հեղինակի «կարապի երգը» դարձավ, հետաքրքրական և ուսանելի է բոլորի համար։

Քանի որ հեղինակը հոդվածը գրել է ռուսերեն լեզվով և քանի որ հնարավոր չէ հայերեն թարգմանությունը համաձայնեցնել հեղինակի հետ, ապա նպատակահարմար է տեքստը ընթերցողին ներկայացնել ռուսերենով։

Հոդվածը հրատարակության է նախապատրաստել Երևանի պետական համալսարանի դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնի ավագ դասախոս փ. գ. թ. Ա. Վ. Ոսկանյանը։